**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖՏ 2019.**

**Սիսիան քաղաքում աղբի տեսակավորման համար աղբամանների տրամադրման ծրագրի ավարտի արարողությունը**

2019 թ. օգոստոսի 5-ին, Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում տեղի ունեցավ «Սիսիան քաղաքում աղբի տեսակավորման համար աղբամանների տրամադրման ծրագրի» 19,914 ԱՄՆ դոլար (2,230,368 ճապոնական իեն) արժողությամբ դրամաշնորհային ծրագրի ավարտի արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ջուն Յամադան, «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի (ՈՒԿԶՀ) գործադիր տնօրեն տիկին Նունե Ղազախեցյանը, ինչպես նաև Սիսիան քաղաքի քաղաքապետ պարոն Արթուր Սարգսյանը:

Ծրագրի նպատակն է Սիսիան քաղաքին տրամադրել խառը թափոնների համար նախատեսված 80 աղբամաններ, որոնք թույլ կտան աղբը արդյունավետ տեսակավորել պլաստիկ և այլ թափոնների: Դրանց օգնությամբ ակնկալվում է բարելավել թափոնների կառավարման և վերամշակման հզորությունը այս քաղաքում, որտեղ բնակվում է 16 հազար քաղաքացի: Արդյունքում, ակնկալվում է նաև, որ կբարելավվեն Հայաստանի հարավ-արևելյան հատվածում աղբահանության և թափոնների հեռացման խնդիրներին առնչվող սոցիալական հարցերը և աղբի տեսակավորման և վերամշակման միջոցով կխթանվի շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված գործունեությունը:



Դեսպան Յամադան և Սիսիան քաղաքի քաղաքապետ պարոն Արթուր Սարգսյանը Սիսիանի քաղաքապետարանում



Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը



Արարողությունից հետո մասնակիցների հետ կենացի հնչեցումը



Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում տրամադրված աղբամանները